ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՇԱՐՔՈՒՄ ԱՍՊԻՆՁԱՅԻ ԵՒ ԴԱՄԱԼԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(14 հունիսի, 2011 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ՝ Ասպինձայում եւ Դամալայում բնակվող մեր Եկեղեցու հարազատ զավակներիդ:

Դեպի ձեզ եկանք գոհության աղոթքով, ուրախ սրտով, քաջալեր հոգով, եւ ահա տեսնում ենք հավատավոր ձեր հոգու խանդավառությունը, սերն ու հավատարմությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ, որով համախմբվել եք այստեղ՝ դիմավորելու Հայոց եւ Վրաց Հայրապետներին:

Հավատքի կենարար ու շնորհաբաշխ զորությամբ մեր ժողովուրդը որտեղ էլ ապրել է, կառուցել ու արարել է, պահպանել ու զարգացրել է իր մշակույթը, ընթացել ժամանակին համաքայլ: Այս մասին վկայում է նաեւ ջավախահայոց պատմությունը, ձեր ընտանիքների պատմությունը, որ գրված են մեր Եկեղեցուն եւ հայրերի ժառանգությանը հավատարմության օրինակներով: Բազմաթիվ են բարեպաշտ, շնորհալի եւ մեծագործ զավակները մեր ժողովրդի, ովքեր ծնունդով Ջավախքից են եւ իրենց գործունեությամբ ավանդ ու վաստակ են բերել մեր եկեղեցական ու ազգային կյանքին, հինավուրց այս երկրի պաշտպանությանը, շենացմանն ու բարօրությանը: Այդ ոգին ու նվիրումը այսօր դուք, սիրելիներ, շարունակում եք ձեր եկեղեցասեր ու հայրենաշեն գործերով: Այս ամեն բարի վկայությունների համար փառաբանում ենք Տիրոջը եւ ձայնակից ենք առաքյալին, որ ասում է՝ «ամեն ժամ գոհություն եմ հայտնում իմ Աստծուն ձեզ համար եւ Աստծո շնորհների համար, որ տրված են ձեզ Քրիստոս Հիսուսով, որովհետեւ ամեն բանի մեջ դուք Նրանով հարստացաք» (Ա Կորնթ. Ա 4-5): Արդարեւ, մեր սիրեցյալ եղբոր՝ Վրաց Եկեղեցու Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի եւ հոգեւոր մեր եղբայրների հետ այցելելով մեր ժողովուրդների զավակներին, մխիթարությամբ ու քաջալերությամբ լեցուն օրեր ենք ապրում՝ ամենուրեք տեսնելով ձգտումն ու ջանքերը հոգեւոր կյանքի վերանորոգության, քրիստոնեական ճանաչողության զորացման, բարօր ու շեն կյանքի կառուցման: Ամենուր տեսնում ենք նաեւ եղբայրությունն ու բարեկամությունը հավատակից մեր ժողովուրդների, որը դարավոր արմատներ ունի եւ շարունակվում է բարեկամության, աջակցության ու համագործակցության նոր վկայություններով:

Չքնաղ այս աշխարհը՝ Ջավախքը հարուստ է քրիստոնեական հիշատակներով, սրբավայրերով, քրիստոնեական ամուր ավանդներով, որ խնամել, պահպանել ու փոխանցել են սերդեսերունդ մեր երկու ժողովուրդների բարեպաշտ զավակները: Տիրոջ ողորմությամբ այսօր մեր եկեղեցիներն ազատ են զորացնելու իրենց առաքելությունը, Աստծո խոսքը քարոզելու, Տիրոջ պատգամները բերելու պապակ հոգիներին մեր զավակների, որպեսզի հավատքը միշտ զորացնի, արդար ու բարի արգասիքներով առատացնի մեր կյանքը եւ հաստատուն պահի մեր ժողովուրդների ընթացքը դեպի մեր Տիրոջ փրկության լույսը:

Մենք գիտենք, որ ձեր հոգեւոր առաջնորդների հետ ձգտում եք առավել բարեկարգ

եւ պայծառ դարձնել համայնքային կյանքը, սնուցել ու մեծացնել ձեր զավակներին ազգային կրթությամբ, քրիստոնեական հավատքի իմացությամբ: Հավատում ենք, որ ձեր նախանձախնդրությամբ, մեր եկեղեցիների ու ժողովուրդների դարավոր բարեկամության ավանդներով պիտի հաղթահարվեն խոչընդոտները, եւ դուք հոգեւոր ու ազգային ձեր կյանքը շենացնելով, առ Տերը հավատով ու ապավինությամբ, որպես արժանավոր քաղաքացիները Վրաստանի, պիտի շարունակեք ձեր ավանդը բերել Վրաստանի առաջընթացին եւ մեր երկու ժողովուրդների ու երկրների բարի հարաբերություններին:

Հաստատուն մնացեք հավատքի մեջ եւ հույսի մեջ առ Քրիստոս, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, հավատարիմ մնացեք մեր մշակույթին, հայրենական սրբություններին ու հիշատակներին, մեր նվիրական հոգեւոր կենտրոնին՝ լուսանկար Սուրբ Էջմիածնին, որը մեր Տերը՝ Քրիստոս, հաստատեց, որ լինի հայոց Իր հոտի Մայր Աթոռ: Թող ձեր եկեղեցասեր ու հայրենանվեր գործերը Տիրոջ փառքը պատմեն, Ջավախքը շենացնեն, ձեր զավակների ուղին ու ապագան լուսավորեն:

Այս հոգենորոգ ու բերկրաշատ օրը վերստին Մեր գնահատանքն ենք բերում ձեզ, սիրելի Սրբազան, ուխտյալ եկեղեցականներ, թեմական վարչության անդամներ, կրթության եւ մշակույթի նվիրյալներ եւ համայն մեր ժողովրդին Վիրահայոց թեմի: Աղոթում ենք, որ Աստված խաղաղ պահի Վրաստանը, թեմական ձեր կյանքը եւ բարի արգասավորում պարգեւի ձեր բոլոր գործերին: Մնացեք խաղաղությամբ, եւ Տիրոջ սերը, շնորհը եւ խաղաղությունը թող լինի ձեզ հետ այսօր եւ հավիտյան. Ամեն: